

Հոգեվարքի մահիճէն ելած են մարդեր, որ ձգած զիրենք շրջապատողները, ճարած անկարելի ուժը իրենց կործանած մարմիններուն ով գիտէ ո՛ր ալքերէն, իջած են վար, դէպի աս կամ ան արտը-բոլորն ալ անուն, պատմութիւն, հոգի, նկարագիր ունին այդ հողի կտորները, հարիւրաւոր տարիներու արգանդէն ինկած ու գեղացիին լաւ կամ վատ օրերուն, տրամադրութեանց բարեխառնութեամբը գունաւոր -ու նստած քարի մը, թումբի մը, ակօսի մը վրայ, նայած են անյագ, կարօտակէզ աչուլներով իրենց սիրելիին- ամբողջ բանաստեղծութիւն մը կայ այդ վերստերուն մէջ, որոնք ապրումներու արձագանգը կ'երկարեն- ու ինկած, սիրտէն նետահար: Հոգին առքն է ասիկա: Հողին քաշելը: Որոնք գեղացիին համար հոգեկան ստուգութիւններ են: Ուրիշներ, հիւանդ, գիշերներու կէսերուն, գտնուած են իրենցմէ կորզուած պարտէզներու մէջ, անգիտակից իրենց լրածին, բայց քողելով ծառերը, զարդարելով թուփերը, լալով, միշտ անձայն ու նուազած մինչեւ լոյս: Այսպէս է, որ գրուեցաւ ապրիլ մեզմէ ոմանց: Ըսի՞ թէ խոշոր ծառաստան մըն էր այդ գեղին անմիջական շրջապատը: Ապառաժներով սապատաւոր ելեւէջներուն միջեւ, անձրեւներուն մաշումը գեղացին գիտցած էր շահագործել, երեւան բերելով փոքր ածուններ, փերով կռուած հողերու միջոցով: Ասոնք էին, որ կ'ընդունէին ընդեղէններու հունտերը, այնքան անհրաժեշտ տղոց, կենդանիներու սնունդին: Խիստ տագնապի տարիներ իրողութիւն էր, որ անոնց կիները ցրուած էին դաշտերը, ամայքները խոտ քաղելու, արմատ քակելու եւ խաշելու համար, պիտանիին հետ վնասակարն ալ ու մեռած են ուռեցողոր, բացառք, ոռնալով: Ու ասիկա այն ատեն, երբ քիչ անդին, իրմէ բռնագրաւուած հողերուն վրայ թշնամիին ցորենը հասակ կը թաղուէր ու գորին, անկարող իր բեռը կրելու, հասակը առած կը պառկէր արտին երեսին, փտելով հնձող բազուկներու պակասէն...: Ո՛վ վէպը արեւմտահայ գրականութեան: Դուն չես նմանիր ուրիշ ժողովուրդներու մօտ քու անունը կրող